ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ «ՄՈՌԱՑՎԱԾ ՀԱՂԹԱՆԱԿՆԵՐ. ԿՈՎԿԱՍՅԱՆ ՃԱԿԱՏԸ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ»

2014 թ. հոկտեմբերի 30-ին Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարանում կայացավ «Մոռացված հաղթանակներ. Կովկասյան ճակատը մեծ պատերազմում» խորագրով միջազգային գիտաժողով: Միջոցառումը կազմակերպել էին Ռուսաստանի ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը (ՌՌՀԻ), ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտը և Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարանը: Գիտաժողովին մասնակցում էին առաջատար գիտնականներ Հայաստանից, Ռուսաստանից, Իտալիայից, Հունաստանից, Բուլղարիայից, նաև ներկա էին ՌԴ Պետդումայի ու ՀՀ Ազգային ժողովի պատգամավորներ, «Ռոսստրուդնիչեստվոյի», ՀՀ-ում Ռուսաստանի դեսպանատան և ՋԼՄ-ների ներկայացուցիչներ: Մասնակիցները քննարկեցին Կովկասյան ռազմաճակատի ունեցած դերը և նշանակությունն Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին, անդրադարձան 1914–1917 թվականների Կովկասյան ճակատի ռազմավարական ու ռազմաքաղաքական կողմերին:

Բացման խոսքով հանդես եկավ Գյումրիի Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական համալսարանի ռեկտոր Վ. Գրիգորյանը*: Գյումրիում Ռուսաստանի գլխավոր հյուպատոս* Ե. Կոնյուշևն *ընթերցեց Հայաստանում ՌԴ արտակարգ և լիազոր դեսպան Ի. Վոլինկինի ողջույնի խոսքը: Ելույթներով հանդես եկան նաև Հայաստանի ու Ռուսաստանի խորհրդարանների պատգամավորներ՝* Օ. Լեբեդևը, Մ. Դեգտյարովը և Ա. Զաքարյանը*:*

Պաշտոնական բացման արարողությանը հաջորդեց լիագումար նիստը: ՌՌՀԻ տնօրեն, պ. գ. թ. Լ. Ռեշետնիկովը *իր ելույթում («Ռուսաստանի Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելու բարոյահոգեբանական պատճառները») նշեց, որ Առաջին համաշխարհային պատերազմի մեջ մտնելու Ռուսաստանի պատճառները հասկանալու համար պետք է հաշվի առնել տվյալ ժամանակաշրջանի իրողությունները: Ռուսական կայսրությունը հանդես էր գալիս որպես առաջատար ուղղափառ երկիր, որի արտաքին քաղաքականության նպատակներից էր հովանավորել ուղղափառ և քրիստոնյա բոլոր ժողովուրդներին: Ըստ նրա՝ դրանով էր պայմանավորված այն իրողությունը, որ Ռուսաստանը չէր կարող անտարբերությամբ հետևել 1915 թ. հայ ժողովրդի ողբերգությանը:*

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռ. Սաֆրաստյանը *իր զեկուցման («Հայկական հարցը Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում. աշխարհաքաղաքական ասպեկտները») մեջ քննեց Հայկական հարցում առաջատար պետությունների աշխարհաքաղաքական ռազմավարությանն առնչվող խնդիրները, որոնք փորձում էին ուժեղացնել իրենց ազդեցությունը տարածաշրջանում:*

Երկրորդ նիստում, որը նախագահում էր Ռ. Սաֆրաստյանը, ելույթով հանդես եկավ ՌՌՀԻ փոխտնօրեն, պ. գ. թ. Մ. Սմոլինը *(«Թուրքիայի դեմ ռազմական գործողությունների մեծապետական իմաստը Առաջին համաշխարհային պատերազմում»): Ըստ նրա՝ Ռուսաստանի համար Առաջին համաշխարհային պատերազմի բնույթը ժամանակի ընթացքում փոխվել է: Եթե պատերազմի սկզբում դա պաշտպանողական բնույթ ուներ, ապա Թուրքիայի պատերազմի մեջ մտնելուց հետո այն ձեռք է բերել մեծապետական իմաստ: Վանաձորի պետական համալսարանի պատմության ամբիոնի վարիչ* Ֆ. Մովսիսյանն *էլ («Առաջին համաշխարհային պատերազմի պատճառների վերաբերյալ դավադրության տեսությունը») ներկայացրեց Առաջին համաշխարհային պատերազմը սկսելու հիմնական պատճառները: Հիմնվելով անգլիական փաստաթղթերի վրա՝ նա հիմնականում անդրադարձավ մասոնական գաղտնի կազմակերպությունների գործունեությանը, որոնք, ըստ նրա, նպաստել են պատերազմի սկսվելուն:*

ՌՌՀԻ վերլուծության և գնահատման բաժնի պետ, պ. գ. թ. Գ. Մուլտատուլին *«Նիկոլայ II կայսրը և հայերը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին. հետպատերազմյան ծրագրերը և դերն օսմանյան ցեղասպանությունից փրկելու գործում» խորագրով զեկուցման մեջ անդրադարձավ Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ցեղասպանությունից մազապուրծ հայ փախստականներին Նիկոլայ II ցարի ցուցաբերած օգնությանը: ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Հայական հարցի և Հայոց ցեղասպանության բաժնի վարիչ, պ. գ. թ.* Ա. Մարուքյանը *(«Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին Կովկասյան ճակատում ռուսական քաղաքականության ոլորտանները»), հիմնվելով արխիվային փաստաթղթերի վրա, ներկայացրեց XX դ. սկզբին հայերի հանդեպ ռուսական կայսրության վարած քաղաքականությունը, ինչպես նաև գոյություն ունեցող քաղաքական երկու հոսանքները և դրանց դերը հայ ժողովրդի կյանքում: Զեկուցումն առաջացրեց հագեցած գիտական քննարկում, որին մասնակցեց նաև Բուլղարիայի ներկայացուցիչ՝* Ն. Մալինովը: *Վերջինիս զեկուցումը նվիրված էր Առաջին աշխարհամարտի տարիներին բուլղարա-թուրքական հարաբերություններին: ՌՌՀԻ վերլուծության և գնահատման բաժնի քարտուղար* Կ. Զալեսկին *«Գեներալ Ն. Ն. Յուդենիչը և բարձրաստիճան հրամանատարական կազմը Կովկասյան ճակատում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին» խորագրով զեկուցման մեջ հիշեցրեց Կովկասյան ռազմաճակատում կռված ու մոռացված հերոսների մասին:*

Գիտաժողովի երկրորդ նիստի վերջում ՀՀ-ում «Ռոսստրուդնիչեստվոյի» ղեկավար Մ. Կալինինը *բացեց «Մեծ և անհայտ» խորագրով ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր Ռուսաստանի պետական պատմության թանգարանի հետ համատեղ և ներկայացվեց ֆիլմ ցուցահանդեսի վերաբերյալ:*

Երրորդ նիստում, որը նախագահում էր Մ. Սմոլինը, *զեկուցումներով հանդես եկան Իրկուտսկի պետական տեխնիկական համալսարանի պատմության և փիլիսոփայության ամբիոնի պրոֆեսոր, պ. գ. դ.* Պ. Նովիկովը *(«Սիբիրյան և անդրբայկալյան կազակները Կովկասյան ճակատի ճակատամարտերում»), Իտալիայի արդարադատության նախարարի տեղակալի միջազգային գործերի խորհրդական* Ա. Զանոտտին *(«Նոր՝* Drang nach Osten? *Պարսկաս-*

տանի ճակատում և Աֆղանստանում գերմանական գործողությունները»), Կուբանի պետական համալսարանի նորագույն պատմության և միջազգային հարաբերությունների ամբիոնի դոցենտ, պ. գ. թ. Օ. Ռատուշնյակը *(«Կուբանյան կազակները Առաջին համաշխարհային պատերազմի Կովկասյան ճակատում»):*

Գիտաժողովի չորրորդ նիստը ղեկավարում էր ՌԴ Պետդումայի պատգամավոր Մ. Դեգտյարովը*: Հայոց ցեղասպանության թեմայով զեկուցումներով հանդես եկան ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի աշխատակիցներ* Ա. Հովհաննիսյանը *(«Հայերի ցեղասպանությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին. ունեցվածքի բռնագրավումը և «Լքյալ գույքի» ֆենոմեն») և պ. գ. թ.* Ք. Մելքոնյանը *(«Արևմտյան Հայաստանի և Կարսի մարզի ժողովրդագրական վիճակը Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին 1945 թ. արխիվային փաստաթղթերի համաձայն»): Գյումրիի պետական մանկավարժական համալսարանի պատմության, իրավագիտության և դրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ, դոցենտ, պ. գ. թ.* Ե. Վարդանյանն *էլ անդրադարձավ Առաջին համաշխարհային պատերազմի վերաբերյալ պատմական հիշողությանը: Թեսալոնիկի (Հունաստան) Արիստոտելի համալսարանի քաղաքական դպրոցի դոցենտ* Մ. Սպիրիդոնը *ներկայացրեց Կովկասյան ճակատի բացումից հետո Փոքր Ասիայում Հունաստանի քաղաքականությունը:*

Գիտաժողովի վերջում ՌՌՀԻ տնօրեն Լ. Ռեշետնիկովը մասնակիցներին և հայ վետերաններին հանձնեց «Հայ-ռուսական ռազմական եղբայրությանը» նվիրված հուշամեդալներ, որի մի կողմում պատկերված են գեներալներ Ն. Յուդենիչը և Անդրանիկը, իսկ մյուս կողմում՝ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ V օրհնում է հայ կամավորականներին: Իր հերթին արևելագիտության ինստիտուտի տնօրեն Ռ. Սաֆրաստյանը վկայագրեր հանձնեց գիտաժողովում զեկուցումներով հանդես եկած գիտնականներին:

«Մոռացված հաղթանակներ. Կովկասյան ճակատը մեծ պատերազմում» միջազգային գիտաժողովի շրջանակներում Գյումրիում համերգով հանդես եկան Իպատևի (Կոստրոմա) Սուրբ Երրորդություն վանական համալիրի տղամարդկանց երգչախումբը և Մոսկվայի «Ժիվայա Ռուս» կազակական համույթը:

ՔՐԻՍՏԻՆԵ ՄԵԼՔՈՆՅԱՆ